ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԸ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐԸ

Սարգիս Մխիթարյան

Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (985/990-1058) ժամանակի քաղաքական, ռազմական ու մշակութային խոշորագույն դեմքերից մեկն է, որը մեծապես կապված է եղել Ծաղկաձորի կեչառիսյան անզուգական բնությանը և այնտեղ՝ հայրական կալվածքում, հիմնել է վանական շինություններ, որոնց ավարտից հետո նաև միջնադարյան նշանավոր ճեմարաններից մեկը[1]:

Վերջին հարյուրամյակի մշակութային վայրիվերումները վերաբերում են և նրա՝ ճանաչված զորահրամանատարի ու մեծ մատենագրի անձի և գործունեության գնահատմանը և վերագնահատմանը: 11-րդ դ. ամենադրամատիկ ճակատագրի տեր այդ տաղանդին երբեմն ընկալել են որպես դավաճան Վեստ Սարգսի համախոհ: Բայց ճանաչված այնպիսի հայագետներ, ինչպիսիք են՝ ֆրանսիացի Վիկտոր Լանգլուան, Ղ. Ալիշանը, Կ. Կոստանյանցը, Գ. Մենևիշյանը, Ն. Ադոնցը, Լ. Մելիքսեթ-Բեկը, Լ. Խաչերյանը, Հր. Բարթիկյանը, Ս. Արևշատյանը և ուրիշներ, ժամանակին կարողացան շտկել պատմական անարդարությունը և վերականգնել նրա բարի համբավն ու հեղինակությունը[2]: Քիչ անց, սակայն, ծագեց մի այլ խնդիր, երբ մեծ մատենագրի վանաշինական-դպրոցաշեն, ճեմարանաստեղծ-մանկավարժական ձեռնարկումները ոմանք ընկալեցին իբրև զուտ շինարարական մի մեխանիկական գործընթաց՝ վերագրելով դա

Հոդվածը ներկայացվել է 18.04.2019 թ., գրախոսվել է 23.05.2019 թ., ընդունվել է տպագրության 21.06.2019 է.:

[1] **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Դ, Ե., ՀՍՍՀ ԳԱ հր., 1970, էջ 37, նաև՝ **Ց. Սիմոնյան,** Ակնարկներ հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության, Ե., ԵՊՀ հր., 1971, էջ 40: **Վ. Ամիրյան, Ա. Թադևոսյան,** Կեչառիս: (Հայտնություններ հայ մշակույթի), Ե., Էդիթ Պրինտ, 2004, էջ 64-71, **Ս. Մխիթարյան**, Գր. Մագիստրոսը և Կեչառիսի ճեմարանական դպրոցը (Խ. Աբովյանի անվ. Պետ. Մանկ. Համ. 95-ամյակի), զեկ. 12. 12. 2017 (աշխ. ծր.): (Գիտ. զեկ. և հոդ. ժողովածու), Ե., Արտագերս, 2018, էջ 92-95:

[2] Տե՛ս **Հր. Բարթիկյան**, Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության (հոդվ. ժող.), Ե., 1971, էջ 63:

այլ անձնավորությունների, որոնք ևս կոչվում են Գրիգոր Մագիստրոս[1]: Հատկապես ոմն Գրիգոր-Ապիրատի Պահլավունյաց տոհմին պատկանելու տեսակետն այժմ որոշակի տարածում է գտնում: Ենթադրվում է, թե նա եղել է կեչառիսյան շինությունների համահեղինակ, Բջնիի Պահլավունյաց կալվածքների մի մասի տերը: Առանձին գիտնականների կարծիքով նա իբր շատ մեծ հետք է թողել հայոց պատմության մեջ[2]: Ժամանակին մեծ հայագետ Գ. Հովսեփյանը կեչառիսյան արձանագրությունները համարել է հետնագիր և դրա արդյունքում ընդունել Ապիրատին որպես **Գրիգոր-Ապիրատ Մագիստրոս**: **Սիրված գիտնականի հետևորդները որոշ երկրորդական աղբյուրների հիման վրա սկսել են շրջանառել տեսակետներ՝ որոնց համաձայն՝ Պահլավունյաց մի անհայտ ճյուղից սերված Ապիրատը դարձել է այդ տոհմի նշանավոր դեմքերից մեկը**[3]: Թեև այդ տոհմից սերված լինելու միանգամայն թույլ վարկածը և մանավանդ ուշ շրջանի կամ Կիլիկյան Պահլավունիների նախահայրը լինելու իրողությունը չենք բացառում և մենք, սակայն բերված տեսակետները կարիք ունեն առավել խորքային ուսումնասիրության: Այժմ երևան են գալիս նոր փաստեր, որոնց շնորհիվ խնդիրները պարզաբանվում են այլ տեսանկյունից ու այլ լույսի ներքո[4]:

Ելնելով կեչառիսյան արձանագրությունների բավականին կամայական վերծանումներից՝ արվել են եզրահանգումներ, որոնք խնդիրները հասցրել են որոշակի թյուրըմբռնումների: Դա հատկապես վերաբերում է **Ապիրատ** և **Գրիգոր Մագիստրոս** անունների նույնացմանը՝ խնդիրը հօգուտ **Ապիրատի** լուծելու, ինչը հնարավորություն է տալիս մանևրել ու զարգացնել սկզբում երկու, իսկ հետո երեք Գրիգոր մագիստրոսների գոյության փաստը[5]: Մենք վստահ ենք, որ Կեչառիսի վանական շինությունների հեղինակը և պատվիրատուն հենց Գրիգոր Մագիստրոսն է: Նրա անունն է հանդիպում անհիմն կերպով կասկածելի համարված տեղի արձանագրություններում և ոչ թե մի քանիսի: Նա է նաև մատենագրական աղբյուրների մի մասում հիշատակված անձը և ոչ թե Ապիրատ Ապիրա-

---

[1] **Ն. Ակինեան,** Ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 372-373:

[2] Տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Անի-Շիրակի պատմության էջեր, Ե., 2010, էջ 138-149:

[3] **Ն. Ակինեան,** Ներսէս Լամբրոնացի, էջ 372-373:

[4] **Կ. Մաթևոսյան,** Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 137:

[5] Տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, Ե., 2015, էջ 5-103:

տյանը (Հասանյանը)՝ Հասանի որդին[1]: Այժմ մի քանի խոսք մատենագրական հիշատակումների մասին՝ բերված Ն. Շնորհալու «Վիպասանություն» պոեմի համապատասխան դրվագներից, որոնք վկայակոչվում են այս խնդրի առումով շահագրգիռ ուսումնասիրողների կողմից: Այսպես.

Իշխանութեամբ շքեղացեալ,
Ջնախնական անուն առեալ,
Որ Ապիրատն էր հորջորջեալ,
Թոռն մեծի Գրիգոր լեալ,
Որ Մագիստրոս մականուանեալ,
Ձայս տունկ բարի արմատացեալ,
Իսմայելեան հողմոյն խլեալ…..[2] և այլն:

Բերված հատվածը հարցի վերաբերյալ ամենակարևոր դրվագներից մեկն է, որը վերծանման ու ընկալման շփոթ է առաջացրել[3]: Հետազոտողներից Կ. Մաթևոսյանը հատվածը վերծանել է այսպես. «…Գրիգոր Մագիստրոս էր կոչվում նաև Ապիրատ իշխանի մորական պապը (Գրիգոր Մագիստրոս Պահլավունին), սակայն Շնորհալին գրում է իր հոր տոհմական ծագման մասին, որը, որպես կանոն, արական գծով էր նշվում, ուստի չպետք է կասկածել, որ այստեղ նշված իշխան Ապիրատի պապ «**Մագիստրոս մականուանեալ» մեծն Գրիգորը, հենց Գրիգոր Ապիրատն է**»[4]: Պատմական այս պոեմի բերված հատվածը, սակայն, վերծանման այսպիսի հիմք չի տալիս, և **Ապիրատ**ը **Գրիգոր չի դառնում**: «***Մագիստրոս մականուանեալ» մեծն Գրիգորն*** աղբյուրներում Ապիրատ չի անվանված: Շփոթմունքի պատճառը թերևս՝ «**Ձայս տունկ բարի արմատացեալ / Իսմայելեան հողմոյն խլեալ**» տողերն են[5]: Երկու ապիպիրատներն էլ ***իսմայելական հողմից*** են ոչնչացել: Ապիրատյան (Հասանյան) Ապիրատ ավագը (Հասանի որդին) սպանվել է 1021 թ. արաբ Ապուսվար ամիրայի ձեռքով: Իսկ պոեմի այս մասում պարզվում է, որ բա-

---

[1] Տե՛ս **Ս. Մխիթարյան,** Մատենագրական տեղեկությունները Գրիգոր Մագիստրոսի մասին, **Տարեգիրք** (գիտական հոդվածների ժողովածու), հ. 12, Ե., ԵՊՀ հր., 2017, էջ 356-362:

[2] **Ն. Շնորհալի,** Վիպասանութիւն, Ե., 1981, էջ 128- 129:

[3] **Ն. Ակինեան**, Ներսես Լամբրոնացի, էջ 385-386:

[4] **Կ. Մաթևոսյան,** Հազարամյա Կեչառիսի հիմնադրման պատմությունից, 2004, թ. Ա, էջ 79:

[5] **Ն. Շնորհալի**, Վիպասանութիւն, էջ 108:

նաստեղծը խոսում է ոչ թե նրա, այլ իր հոր մասին ու բառացի գրում է. «**Այն որ և մեր հայրն լեալ, / Զոր վերագոյն նախասացեալ**,/ Հագարացի ոմն նստեալ, / Զլայնալիճն լի քաշեալ,/ Զերեքթևեանն եռաթունեալ /Յանկարծակի զնա հարեալ»[1]: Իսկապես, սա բանաստեղծի հայր Ապիրատն է[2], որը սպանվում է հայրենական բերդը (Ծովքը) պաշտպանելիս, և որին կարող ենք պայմանականորեն Պահլավունի անվանել, քանզի նա **Վասակ քաջի** որդի **Գրիգոր Մագիստրինոսի (Մագիստրոսի-Ս. Մ.)** մայրական գծով թոռն է, բայց ոչ **Ապիրատյան** (Հասանյան) **Ապիրատ պապը**: Բանաստեղծի հայր **Ապիրատը** մագիստրոսական աստիճան և մականուն չունի: Ն. Շնորհալու հիշյալ պոեմում մեզ համար մեծ կարևորություն ունի նաև նախընթաց 1-ին հատվածը պապի մասին: Այն հետևյալն է.

Ի նախնական հօրէ սկսեալ՝
Ի Պարթևէն լուսաւորեալ,
Մինչ ի Վասակ քաջն հասեալ,
Այն, որ արեամբ նահատակեալ,
Հորմէ Գրիգոր որդի ծնեալ,
Մագիստրինոս վերապատուեալ.
Աստուածային շնորհօք լցեալ,
Հորն մերոյ նա հայր եղեալ,
Ըստ մայրականն միջնորդեալ[3]:

Ակնհայտ է, որ այստեղ դարձյալ խոսվում է մայրական պապի մասին և ոչ թե հայրական: **Գրիգորն այստեղ Վասակ քաջի որդին է,** և կասկածի տեղիք տրված չէ[4]: Նա է՝ «Ըստ Հոմերի տաղաչափեալ /Ըստ Պղատոնի պերճաբանեալ /Յունականին ներհուն եղեալ.... Աստուածաշունչ տառ վերծանեալ»[5] համարվածը: Այդ մականունը՝ ***Մագիստրինոս (Մա-***

---

[1] Նույն տեղում, էջ 129-131:

[2] Ն. Ակինյանը շեշտում է, որ դա Ապլջահապի որդի Ապիրատն է՝ Ներսես Շնորհալու հայրը: Տե՛ս **Ն. Ակինեան**, Ներսես Լամբրոնացի, էջ 385-386:

[3] Նույն տեղում, էջ 108:

[4] Տե՛ս **Վր. Վարդանյան,** Պահլավունիները Հայոց պետականության և հոգևոր անաղարտության պահապաններ, էջ 77: Այս մասին գրած գիտնականներն այդպիսի եզրակացություններ չեն արել:

[5] Նույն տեղում, էջ 109:

գիստրոս), ուներ միայն մատենագիր Գրիգոր Մագիստրոս Պահլավունին և ոչ Ապիրատ Ապիրատյան-Հասանյանը: Ինչպես արդեն նշվեց, Ն. Ադոնցը, որոշ դեպքերում չհամաձայնելով հայտնված առանձին տեսակետների հետ, իր հայտնի գրախոսության մեջ գրում է. «Հարգելի Գարեգին (Գ. Հովսեփյանը-Ս.Մ.) կարծում է, որ **Գրիգոր** և **Ապիրատ** անուններ են միեւնոյն անձի և որ ՆՁԲ ուղղելու է ՆԾԲ 1003, բայց **Ապիրատ Մագիստրոսութեան պատիւ չունէր»**[1] **(**ընդգծ. մերն է): Այո՛, նրանք միևնույն անձը չեն, և Ապիրատը նաև մագիստրոսական աստիճան չունի: Իսկ այդ հանգամանքը հաստատում է, որ պատմական երկու անձանց արհեստական նույնացումը դառնում է մեծ խառնաշփոթի պատճառ: ***Ապիրատյան (Հասանյան) Ապիրատին*** **(ավագին)** չի կարելի նույնացնել Գրիգոր Մագիստրոս Պահլավունու հետ[2], չպետք է նաև նրան շփոթել ***Ապիրատյան (Հասանյան) Ապիրատի*** **(կրտսերի)** հետ, որը Ն. Շնորհալու հայրն է[3]: Մատենագիր Ն. Շնորհալին ևս այդպիսի շփոթի առիթ չի տալիս, ինչպես տեսանք վերևում: Նա հենց պոեմի երկու հատվածում էլ իր մեծ պապ Գրիգոր Մագիստրոսին նկատի ունի, նրա մասին է խոսում[4], և կասկածի առիթ ու երկակի վերծանման տեղիք բնավ չի տալիս: Իր Ողբ ի վերայ Արամեանս նահանգի» երկում /չափածո թուղթ ԺԹ/[5] **Մագիստրոսն** անդրադառնում է իր ազգաբանությանը. «Բայց ահա ոչ թողից չասել զՊարթևացն պարու: /Ո՜ւր և Վաղարշակ քաջ ի քաջացն Բախլայ, /Ո՜ւր Արշակ և Արտաշէս…»[6] և այլն: Պահլավունիները և հետագա մատենագիրները հետևյալ կերպ են ճանաչում իրենց անշփոթելի նախնուն, ինչպես Ն. Շնորհալին՝ Յորմէ **Գրիգոր** որդի ծնեալ, **/Մագիստրինոս** վերապատուեալ…[7]: Հեղինակը շեշտում է մայրական պապի՝ հունական

---

[1] **Ն. Ադոնց,** Քննական Տեղեկագիր պրոֆ. Ն. Ադոնցի՝ ի մասին Տ. Գ. Յովսեփեանի «Հոգեւոր Կեդրոններ եւ Գլաձորի բարձր դպրոցը» ուսումնասիրութեան /գրախոսություն/. Տե՛ս **Գ. Յովսեփեան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, էջ 446:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս **Վ. Վարդանյան**, Պահլավունիները Հայոց պետականության և հոգևոր անաղարտության պահապաններ, էջ 74-75:

[4] Տե՛ս **Ն. Շնորհալի,** Վիպասանութիւն, էջ 107-109, 128-131:

[5] Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ 59-61:

[6] Նույն տեղում, էջ 61: Նաև՝ **Ս. Մխիթարյան,** Գրիգոր Մագիստրոսի «Ողբ ի վերայ Արամեանս նահանգի» երկը, Էջմիածին, 2002, թ. ԺԱ-ԺԲ, էջ 76:

[7] **Ն. Շնորհալի**, Վիպասանութիւն, էջ 108-109:

արքայից մեծ պատիվների արժանացած լինելը, նահանգների տիրելը, բայց և շոշափում է պապի վանաշինական և «Զվարդապետաց հոյլ ժողովեալ»-ի հարցը՝ գնահատելով նրա կրթամշակութային գործունեությունը, որ Ապիրատը երբևէ չի ծավալել[1]: Մինչդեռ Գրիգոր Մագիստրոսը «Մայրաքաղաքի այս կյանքին համեմատ սնաւ և զարգացաւ.....իբրև մի մեծատուն և իշխան,-գրում է մեծ մագիստրոսագետ Կ. Կոստանյանցը,- միևնոյն ժամանակ նորա մէջ չթուլացան հակումները դէպի գրական և ուսումնական գործունէութիւնը»[2]: Խոստովանենք, որ այս անձինք՝ Ապիրատը և Գրիգոր Մագիստրոսը, չեն համեմատվում: Այս խնդիրներում բավականին անշեղ են Մ. Օրմանյանի տեսակետները, որը հիմնականում ավանդական շրջանակներում է քննում առկա հարցերը և որևէ մեկին չի նույնացնում Գրիգոր Մագիստրոս Բջնեցու հետ[3]:

«Հայկազեանցն սեռի եւ Արշակունեացն զարմի» մասին հորինված պոեմում բանաստեղծ Ն. Շնորհալին այսպես կոչված Պարթև-Պահլավունիներ համարվածների «մյուս ճյուղի» մասին կգրեր ավելի վաղ դրվագում՝ համապատասխան հատվածում, երբ խոսում է 11-րդ դարի ամենասկզբի դեպքերի և ենթադրյալ Ապիրատյանների (Հասանյանների) երևան գալու մասին: Բայց նա անհրաժեշտ չի համարել դա անել, որովհետև նրանք այդ ժամանակ Պահլավունի չեն, ուստի ոչ էլ նրանց մասին գրում է[4]: ***Հասանի*** և նրա որդի ***Ապիրատյան (Հասանյան) Ապիրատի*** մասին խոսք չկա պոեմում, ինչպես և իր պապ ***Ապլջահապի*** մասին որևէ հիշատակում չի արվում, քանզի նրանք դեռևս չեն համարվում Պահլավունի[5]: Իսկ կրտսեր Ապիրատ իշխանի համար, որի մասին արդեն խոսվեց, Մ. Աբեղյանը ասում է հետևյալը, թե Ն. Շնորհալու հայրն էր «Ապիրատ Պահլավունին.....: Նա տերն էր Ծովք կամ Ծով կոչված փոքրիկ

---

[1] Ն. Շնորհալու «Վիպասանութիւն» պոեմում Հասանյան Ապիրատի և առհասարակ Հասանյանների (իմա. Ապիրատյանների) մասին որևէ հիշատակություն չկա:

[2] Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ ԼԱ:

[3] **Մ. Օրմանեան,** Ազգապատում, հ. Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 1559-1691:

[4] **Ն. Շնորհալի**, «Վիպասանութիւն», էջ 104-107:

[5] Կ. Մաթևոսյանը նկատել է, որ ‹‹Անիի պատմության դրվագները ներկայացնելիս Ս. Անեցին ընդհանրապես չի նշում Գրիգոր Գ-ի արական գծով նախնիներից որևէ մեկին.... բնագրում Գրիգոր Գ-ի հայր Ապիրատ իշխանը համարվում է ոչ թե Գրիգոր Վկայասերի քրոջ զավակը, այլ եղբորորդին»:

բերդի»[1]: Իրականում նա Հասանի որդի Ապիրատի թոռն է՝ Ապլջահապի որդին՝ **Ապիրատ կրտսերը**: Նրա որդիները հորեղբորորդին ու մորաքրոջ տղան են Բարսեղ Ա /1105-1113/ կաթողիկոսի, որը որդին է Ապլջահապի եղբայր Վասակի[2]: Այսինքն՝ պատանիների հայրերն ու հորեղբայրները խաչաձև եղբայրներ են և մայրերն ու մորաքուրերը՝ քույրեր[3]:

Նկ. 1. ‹‹Գրիգոր Մագիստրոսի ճեմարանը››
(սրահ Սանահնում)

11-րդ դարի պատմիչ Ար. Լաստիվերտցին մեկ այլ Գր. Մագիստրոսի չի հիշում, բացի Վասակի որդի Գրիգոր Մագիստրոսից, որ ի թիվս այլ գործերի՝ կառուցել է տվել Ս. Կարապետի վանքի ժամատունը և նրա մոտ գտնվող Ս. Գրիգոր փայտաշեն եկեղեցին[4]: Իսկ Հասանի և Ապիրատի մասին ոչ մի խոսք չի ասում: Հասանյանները մոր կողմից են Պահլավունի, և Մ. Ուռհայեցին բնավ էլ Հասանին Պահլավունի չի անվանում: Այսպես ահա. «Եւ յայնժամ /1073 թ./ Տէր Գրիգորիս /իմա. Վկայասեր-Ս.Մ./ գնացեալ ի մայրաքաղաքն Հայոց, որ կոչի Անի, և անդ ձեռնադրեաց եպիսկոպոս ***զԲարսեղն՝ զքեռորդին իւր՝ զորդի Վասակայ որդւոյ Ապիրատին՝ որդւոյ Հասանայ,*** որ ի յետ ժամանակաց էառ զաթոռ հայրապետութեան տանն Հայոց»[5]: Մագիստրոսի սի որդի Գրիգոր Վկայասերը (վեստ Վահրամը) (տե՛ս նկ. 2) 1073 թ. գալիս է Անի և իր քրոջ որդուն՝ **Ապիրատյան** (Հասանյան) Վասակի որդի Բարսեղին եպիսկոպոս ձեռնադրում, որը հետո գրավում է Հայոց հայրապետական Աթոռը 1105-1113 թվականներին: Այստեղ «Պահլավունի» ա-

---

[1] **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Դ, էջ 96:

[2] Տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 137:

[3] **Ն. Ակինեան**, Ներսես Լամբրոնացի, էջ 386:

[4] Տե՛ս **Ար. Լաստիվերտցի**, Պատմություն, Ե., 1971, էջ 85:

[5] **Մ. Ուռհայեցի**, Ժամանակագրություն, էջ 226:

նունը գործածված չէ կանխամտածված ձևով: Ապլջահապի և Վասակի որդիները Պահլավունի են մայրական ժառանգորդության տեսակետից, բայց ոչ ծագումնաբանորեն կամ տոհմաբանորեն, դրա համար էլ պատմիչը նրանց այդպես չի կոչում: Ըստ Կ. Մաթևոսյանի՝ Ապլջահապը երիտասարդ հասակում է մահացել, և նրա զավակներին մեծացրել է մայրական գծով պապը՝ Գրիգոր Մագիստրոս Բջնեցին[1], ինչը հավանական է:

Նրանց այդ իրավունքը և տոհմանունը միայն հետընթացի օրենքով որպես բացառություն կարող է տարածվել իրենց երեք սերնդի հայրերի՝ Վասակի և Ապլջահապի, իրենց պապի՝ Ապիրատի, իրենց ապուպապի՝ Հասանի վրա: Նրանք՝ այս թվարկվածները՝ Պահլավունիներ են հետընթացով, միաժամանակ և՛ Պահլավունի, և՛ ոչ Պահլավունի:



Նկ. 2. **Գրիգոր Վկայասեր** կաթողիկոս (Մ. Մ. ձեռ. 6988, էջ 389բ (1763 թ.)

Ինչո՞ւ, վերջապես, Գրիգոր Մագիստրոսը «զլանում» է խոսել «մյուս ճյուղի Պահլավունիների» մասին: Մի՞թե նրան ծանոթ չէին ***Հասանը, Ապիրատը, սրա որդիները,*** որ իր փեսաներն էին: Արդյոք նրան անհայտ էին Կեչառիսի արձանագրությունների տեքստերը: **Գրիգոր Մագիստրոսն** այն հեղինակներից չէ, որի աչքից կարող էր վրիպել որևէ մանրուք, կամ որի համար միևնույն էր, թե իրեն վերաբերող ինչ-որ հարց կարող էր անուղղելի թյուրիմացության առիթ տալ: Ամեն տեսակի թյուրիմացություններից խուսափելու համար **Գրիգոր Մագիստրոս Պահլավունին՝ հենց ինքը, որ իր կյանքի վաղ շրջանի թղթերում իրեն անվանում է «Գրիգոր որդի Վասակայ քաջի», նախապես ընտրում է անշփոթելի Մագիստռ/ր/ոս մականունը[2] որպես**

[1] Տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 124-125:

[2] Նույն տեղում, էջ 170:

<u>մատենագիր,</u> և իրեն անվանում նաև «**Գրիգոր Մագիստրոս Արշակունի»**[1]: Ու եթե Կեչառիսում օգտագործված այսպես կոչված ***Գրիգոր Մագիստրոս Ապիրատյան-Հասանյանի*** անուն-մականվան մասին մյուս ***Գրիգոր Մագիստրոսը՝ Վասակյանը,*** չգիտի, և դա իրեն չի վերաբերում, ապա ինչո՞ւ նա պետք է կրկնի նախորդի անուն-մականունը՝ խառնաշփոթ առաջացնելով իր տոհմաբանության մեջ ևս: Եվ վերջապես, եթե կեչառիսյան 1-ին արձանագրության ՆՁԲ՝ 1033 թ., որ որոշ հետազոտողներ վերափոխում են ՆԾԲ՝ 1003 թ. և վերագրում անհայտ ***Գրիգոր Մագիստրոս Ապիրատյան-Հասանյանին, ապա ինչպես է, որ 1051 թ. նա կրկին հանդես է գալիս որպես կենդանի անձնավորություն: Մի՞թե երեսուն տարի անց կրկին Ապիրատ Հասանյանը նոր կառուցումներ է կատարել: Չմեղանչելով այդ մարդու հիշատակի առջև՝ այնուամենայնիվ, չենք կարող չհարցնել, ինչպե՞ս է դա տեղի ունեցել:***

Իր «Գամագտական» կոչված (ՁԷ) թուղթը ակրոստիքոս է և հոդում է՝ ***Գ-ր-ի-գ-ո-ր Մ-ա-գ-ի-ս-տ-ռ-ո-ս՝*** հունական հնչումով: Այդ կերպ են գրված Կեչառիսում եղած արձանագրությունները: Կարելի է նկատել անմիջական կապ մագիստրոսյան ՁԷ թղթի և կեչառիսյան արձանագրության տեքստերի միջև: Կեչառիսի «Երկու արձանագրության մեջ ևս, «Գրիգոր Մագիստռոս» գրուած է նոյն լիգատուրայով եւ նոյն արտասանութեամբ…,- գրում է Գ. Հովսեփյանը,- յատկապէս ուշադրութեան արժանի է ռ եւ ր տառերի կցումը, որ հազիւ է երևան գալիս մեր հնագրութեան մէջ….ԺԳ դարում»[2]: Սակայն դա տեղի է ունեցել և 11-րդ դարում: Այդ դեպքում մենք համաձայնել մեծ գիտնականի վարկածի հետ չենք կարող, քանզի դրանք հետագա գրություններ չեն: Մինչդեռ **Մագիստրոսի** հռետորական ոճը զգալի է ինչպես նշված թղթի, այնպես էլ վիմական արձանագրությունների մեջ:

Բոլորովին հիմքեր չկան կարծելու, թե Կեչառիսում հիշատակված ***Հասանը*** նույն մարդն է, որ հայրն է Ապիրատ ավագի, իսկ ***Գրիգորն*** էլ՝ այդ Ապիրատը: Այս անհամապատասխանությունը չենք կարող ճիշտ համարել ու դրանից էլ բխեցնել մի Պահլավունյաց «անհայտ ճյուղ», որը նաև մեծ կալվածքներ ունի Կեչառիսից մինչև Երևան ձգվող տարածքի վրա: Այսպիսի սոսնձումները խճճում են ու բարդացնում նույնիսկ ամե-

---

[1] Նույն տեղում, էջ 148:

[2] **Գ. Յովսեփեան,** Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, էջ 160:

նասովորական իրողությունները: **Գրիգոր Մագիստրոսը** մի քանի այլ առիթներով հաստատում է սեփական ինքնությունը իր նշանավոր ստեղծագործություններում: Օր. «Հազարտողեան» պոեմի սկզբնամասում գրում է. «Ի չորս հարիւր և իննսուն և չորս թուականութեանս Հայոց, լինելոյ իմ ***Գրիգոր Մագիստրոսի, որդի Վասակայ աստվածապահ կիրոնի և դուկի և Պահլաւունւոյ***, եղեալ իմ յաստուածապահ քաղաքին Կոստանդնուպալիս...»[1]: Այստեղ իմաստասեր բանաստեղծը խոսում է 1045 թ. (1046 թ.) Կոստանդնուպոլսում լինելու մասին և նշում է իր տոհմաբանական տվյալները: Մի այլ դրվագում էլ գրում է Ս. Սահակի հետ իր ազգակցության մասին.

Արդ զիս այս տոհմէ գիտեմ՝ ազգաւ Պարթև իմ հայրենին,
Որդի իւր աշակերտ մկրտութեամբ աւազանին.....[2]:

Մագիստրոսը դարձյալ շեշտում է իր մականունը և իր հոր իշխանական պատվանշանները՝ ***կիրոն*** և ***դուկ***, որոնք միաժամանակ զինվորական ու իշխանական աստիճաններ են խորհրդանշում: Մենք կրկին հակված ենք կարծելու, որ բյուզանդական բանակի զինվորական աստիճանակարգը որոշակիորեն ընդունված է եղել հայոց մեջ իբրև ընդհանուր օգտագործման ձև: Դա մեծապես վերաբերում է և **մագիստրոս** զինվորական աստիճանին: Վիմագետ Գ. Սարգսյանը նշում է, որ «**Հայոց մագիստրոս**» անվանումը ժամանակին պաշտոն է եղել[3]: Մենք հաստատում ենք այդ վարկածը՝ ավելացնելով նաև, որ մեզանում ընդունված են եղել բյուզանդական իշխանական տիտղոսները, թերևս նաև զինվորական աստիճանակարգն ընդհանրապես, ինչպես այժմ ռուսական բանակինը (Զմոռանանք, որ Հայաստանը 387 չարաբաստիկ թվականից հետո ուներ նաև Արևմտյան՝ բյուզանդական մաս): Օրինակ, Վահրամ Պահլավունու ենթադրյալ որդիներից մեկը՝ **Սմբատը,** ունեցել է **մագիստրոսական** աստիճան 11-րդ դարի սկզբում[4]: Չի կարելի կարծել, թե նա բյուզանդական աստիճանավոր է եղել կամ գործակալ Անիում, որ **մագիստրո-**

---

[1] **Տաղասացութիւնք** Գրիգոր Մագիստրոսի Պահլաւունւոյ,Վենետիկ, Ս. Ղազար, 1868, էջ 1:

[2] Նույն տեղում, էջ 73:

[3] Տե՛ս **Գ. Սարգսյան**, Գրիգոր-Ապիրատ Հասանյան՝ հիմնադիր Կեչառիսի վանքի/ վիմագրական նոր վկայություն/, էջ 111-112:

[4] Տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 137:

սական աստիճան է ստացել: Հայտնի է իհարկե՝ բյուզանդացիք կարողացել են աստիճաններ շնորհելով համախոհներ ձեռք բերել և Հայաստանում: Հավանական է, որ այդ աստիճանը մեզանում ևս՝ անկախ բյուզանդական աստիճանաշնորհման, գործածական էր և միայն Բագրատունյաց Հայաստանում էր սահմանափակ նշանակությամբ օգտագործվում՝ «**Հայոց մագիստրոս**» անվանումով: Կա մի ուշագրավ հանգամանք. Բյուզանդական կայսրության վաղ շրջանում **մագիստրոս** էին անվանում կուսակալներին: Այդ դեպքում դա զինվորական աստիճան չէր, այլ զբաղեցրած տեղապահ-կուսակալի պաշտոն: Բոլոր դեպքերում, հաճախ հենց բյուզանդական իրականության մեջ իշխանական ու զինվորական աստիճանները խառն են օգտագործվել: Թերևս դա մեծապես վերաբերում է Գրիգոր Մագիստրոսին, երբ նա 1045-ից հետո դարձավ Տարոնի և Վասպուրականի կուսակալ[1]: Մինչդեռ Գրիգորը **Հայոց Մագիստրոսի** կոչումն ու պատվանունը ստացել է ավելի վաղ՝ պատանության հասակում, ինչը և նրան մղել է դա վերածել գրական մականվան[2]:

Հր. Աճառյանն իր «Հայոց անձնանունների բառարանում» Գր. Մագիստրոսի մասին գրում է, թե որդին է Վասակ Պահլավունու, որի եղերական մահվանից հետո նա Բջնի ամրոցի և նրան կից կալվածքների տերն է[3]: Երկու այլ գրիգորների մասին Հր. Աճառյանը հիշում է 11-րդ դ. վերջի համար. մեկը Շիրակի իշխանն է, որ սպանվեց 1093 թ., **մյուսը Ն. Շնորհալու հորեղբորորդին՝ Գրիգոր Պահլավունին՝ մեռած 1094 թ.:** Երկուսն էլ Գրիգոր Մագիստրոսից 30-40 տարի անց ապրած մարդիկ են և կապ չունեն հիշյալ հարցերի հետ[4]: Կան և ուրիշ Պահլավունի Գրիգորներ, որոնք սկսած Գրիգոր Ա Համզեից (պապից) և ավարտած Գրիգոր Վկայասերով շատ են՝ չհաշված վերանվանված կամ **պատվաստված Պահլավունիների** մեջ եղածները:

Մատթ. Ուռհայեցին[5] և ժամանակի այլ պատմիչներ, այնպես էլ նշա-

---

[1] **Արամ Տեր-Ղևոնդյան**, Հոդվածների ժողովածու, Ե., ԵՊՀ հր., 2003, էջ 92-115:

[2] Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ Թ:

[3] **Հր. Աճառյան,** Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Ե., 1942, էջ 549: Նաև՝ Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Ե., 1962, էջ 49:

[4] **Հր. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, էջ 551:

[5] **Մ. Ուռհայեցի**, Ժամանակագրություն, էջ 16-21, /ծան. 34/:

նավոր բոլոր հայագետներ՝ Մ. Չամչյանը[1], Ղ. Ալիշանը[2], Գ. Զարպհանալյանը[3], Մ. Աբեղյանը[4] և այլք խոսում են Գր. Մագիստրոսի և նրա սերունդների մասին: Իսկ մագիստրոսագիտությամբ զբաղված ամենանշանավոր դեմքերը՝ **Կ. Կոստանյանցը**[5], **Լ. Խաչերյանը**[6], **Ս. Արևշատյանը**[7], **նը**[7], **Հր. Բարթիկյանը**[8] չեն խոսում մի երկրորդ այդպիսի անձի մասին: Հասանի և նրա որդու մասին այս հայագետները նույնպես տեղյակ են, բայց չեն նույնացնում նրան Գրիգոր Բջնեցու հետ: Մեր առաջին աշխատության մեջ[9] և հոդվածներում՝ նվիրված մեծ զորահրամանատարի, գիտնականի ու արվեստագետի կյանքի ու գործի քննությանը, մենք ևս այդպիսի խնդիր չենք առաջադրել՝ հասկանալով ստեղծվելիք փակուղային իրավիճակի վտանգավորությունը:

Այն միամիտ համոզմունքը, թե մոռացության մատնելով թյուրիմացությունները՝ սկսված ընթացքը բնականորեն կանգ կառնի, չարդարացավ: Հարցը նոր ու հեռուն գնացող այլ վարկածների սկիզբ դրեց: Ուստի միջնադարյան մեծ մատենագրին վերաբերող անդրադարձ կատարեցինք մեր մյուս աշխատության մեջ՝ Հավուց Թառի Ս. Ամենափրկիչ վանքի կառուցման, Տերունական Խաչը նրանում տեղակայելու և «Զորս ըստ պատկերի քում» շարականի հեղինակային պատկանելիության առիթով[10]: Բայց այս ամենն արդեն քիչ է՝ ձնագնդին գլորված է: «Մագիստ-

---

[1] Տե՛ս **Մ. Չամչյան**, Հայոց պատմություն, հ. Բ, Ե., ԵՊՀ հր., 1984, էջ 899-900:

[2] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Շնորհալի և պարագայ իւր, էջ 8-12:

[3] Տե՛ս **Գ. Զարպհանալյան,** Հայկական հին դպրութեան պատմութիւն /Դ-ԺԴ/, Վենետիկ, 1888, էջ 553-554:

[4] Տե՛ս **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Դ, էջ 34-37:

[5] Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, (Բնագիրը, առաջ. և ծանոթ. Կ. Կոստանեանցի**)**, էջ Ա-ԽԸ, 247-352:

[6] Տե՛ս **Լ. Խաչերյան**, Գրիգոր Պահլավունի Մագիստրոս /985-1058/, Լոս Անջելես, 1987, էջ 20-33:

[7] Տե՛ս **Ս. Արևշատյան,** Հայ մշակույթի նշանավոր գործիչներ, Ե., 1976, էջ 213:

[8] Տե՛ս **Հր. Բարթիկյան,** Գրիգոր Մագիստրոսի քաղաքական կողմնորոշման շուրջը, Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության (հոդ. ժողովածու), Ե., 1971, էջ 68-72:

[9] Տե՛ս **Ս. Մխիթարյան**, Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, Ե., Լուսակն հր., 2001, 165 էջ:

[10] Տե՛ս **Ս. Մխիթարյան,** 10-11-րդ դարերի հայ մշակութային դաշտը և գրականության զարգացման յուրահատկությունները, Ե., ԵՊՀ հր., 2009, էջ 225 /ծան. 76/:

րոս» մականվան հարցը շփոթի տեղիք նախկինում երբեք չի տվել, քանի որ Պահլավունյաց ազգից որևէ մեկը գիտակցաբար չի կրկնել ու չի ժառանգել այդ մականունը, որպեսզի շփոթ չառաջացնի, ինչպես հեղինակը ևս դա արել է մյուսներին չնմանվելու համար: Նշանավոր հայագետ Պ. Խաչատրյանի գիտությամբ Ն. Շնորհալու «Վիպասանություն» պոեմի ծանոթագրության մեջ հայագետ Ման. Մկրտչյանը նշում է հետևյալը. «**Եկեղեցիս վայելչացեալ, Ի Հայաստան աշխարհս շինեալ»-ով** բանաստեղծ Ն. Շնորհալին նկատի ունի Գրիգոր Մագիստրոսին, նրա շինարարական գործերը: Մագիստրոսը, թողնելով Այրարատը, 1044 թ. գնում է Տարոն, ուր շինում է Ս. Կարապետի վանքը և բազմաթիվ այլ եկեղեցիներ: Մինչ այդ Մագիստրոսը հոր՝ Վասակ Պահլավունու հետ միասին կառուցել էր Բջնիի ամրոցը, և հետո ինքը կառուցել է տեղի Ս. Աստվածածնի եկեղեցին (1031 թ.): Մագիստրոսի օրով է կառուցված նաև Կեչառիսի Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցին»[1] (1033 թ.) և այլն: Ինչպես տեսնում ենք, Պահլավունիների տոհմաբանության մեջ սկսվող խառնաշփոթն այժմ է, որ խորանում է:

Սարգիս Երեցը, Գրիգոր Տաթևացին, Ձիգ Ջուղայեցին և մյուսները վկայում են, որ «Զորս ըստ պատկերի քում» շարականը պատկանում է Գրիգոր Մագիստրոսի գրչին[2]: Եվ ինչպես կեչառիսյան արձանագրություններում, որ գայթակղության քար են դարձել ուսումնասիրողների համար, մենք գլխավորապես գործ ունենք Գրիգոր Մագիստրոսի անվան հետ, այնպես էլ Հավուց Թառի դեպքում նախնական կառուցումները կատարողը նա է: Բայց Ն. Ակինյանը գրում է. «Կայ նաև կեղծ արձանագրութիւն մը 1031- էն, ***ուր Հաւուց թառի եկեղեցւոյ շինութիւնը Գրիգոր Մագիստրոսը կընծայուի***»[3]: Սակայն ինչո՞ւ են մագիստրոսյան գրեթե բոլոր արձանագրությունները ճանաչված գիտնականի մոտ համարվում կեղծ, իսկ հասանյաններինը՝ ճիշտ կամ երբ պետք է՝ ճիշտ, երբ պետք է՝ սխալ: **<u>Մեր կարծիքով առաջադրված պնդումը լուրջ քննադատության չի դիմանում</u>**:

---

[1] Նույն տեղում, էջ 66:

[2] **Մատենագիրք Հայոց. Շարական**, հ. Ը, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 13-24: Տե՛ս նաև՝ **Ս. Մխիթարյան**, Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, էջ 108-111:

[3] **Ն. Ակինեան**, Ներսէս Լամբրոնացի, էջ 377:

Հավուց Թառի 1013 թ. արձանագրության տեքստում ասվում է. **«Թուին ՆԿԲ, ի թագաւորութեանն Գագկայ և հայրապետութեանն տեառն Սարգսի, ես Գրիգոր Մագիստրոս վերստին շինեցի զեկեղեցիս յիշատակ ինձ և ծնողաց իմոց: Նաև ի տերանց աշխարհիս գանձագին արար զվայր սորա լերամբն և դաշտամբն....Եւ տուաք յիշատակ անջնջելի արձանագրով և աշխարհակալ թագաւորի թղտովն և կայսերական կնքովն, հաստատեցաք ձեռագրով և հայրապետական նամակովն: Եւ ի նաւակատիս տաճարիս զոր շինեցաւ, ընծայեցաք զհայրենիս մեր սուրբ եկեղեցւոյս, որ է Հայոց Թառ, հանգստարան և օդարան անձեռագործ սբ. Պատկերին Յիսուսի Քրիստոսի, որ ի փայտին»**[1]: Ոճը, որով տրված է արձանագրությունը, բոլորովին էլ խորթ չէ Գրիգոր Մագիստրոսի գրելաձևին: Կ. Կոստանյանցը Սիմեոն Կաթողիկոս Երևանցու՝ առաջադրած 1023 թ. թվականի շուրջ իրավացիորեն առարկում է. «Այսպես թե այնպես արձանագրի մեջ հանգամանքներն այնքան պարզ և բնական են, որ վավերականության վրա կասկածել դժվար է»[2]: Ուստի թվականը վերանայելն ավելորդ է ու դարձյալ չպատճառաբանված: (Մինչդեռ Ն. Ակինյանը, ինչպես տեսանք, այս դեպքում էլ առաջադրում է արձանագրության գրության մեկ այլ թվական՝ 1031-ը: Պարզ է, որ նա խառնաշփոթ է առաջացնում այս դեպքում ևս):

Հավուց Թառի գրությունները և կալվածքի պատկանելիության փաստը կապվում են նաև Կեչառիսի արձանագրությունների խնդիրներին և որոշ չափով պարզություն են մտցնում այդ հարցում (Աղ. առաջին): Այստեղ հիշատակված Գրիգոր Մագիստրոսը բնավ էլ Ապիրատը չէ: Սակայն այս փաստը ևս անսպասելի տարակույսի տեղիք է տվել: Կ. Մաթևոսյանը գրում է. «Գևորգ իշխանի տոհմաբանության մասին նորահայտ տեղեկության շնորհիվ ակներև է, ***որ եթե Հավուց թառում եղել է 1013 թ. մի արձանագրություն Գրիգոր Մագիստրոսի անունով, ապա նա վանքի հովանավոր իշխանի եղբայր Գրիգոր Ապիրատն է, որն, ինչպես տեսանք, 11-րդ դարի աղբյուրներում հիշատակվում է միայն Գրիգոր Մագիստրոս անունով: Հնարավոր է, որ հենց այդ անունն էլ շփոթեցրել է հետագայի հեղինակներին, որոնց իմացած «Գրիգոր Մագիստրոսը» միայն Պահլավունի (Բջնեցի) իշխանն էր, ուստի «Ամե-***

[1] Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ ԼԲ:

[2] Նույն տեղում:

նափրկչին» վերաբերող պատմությունները «ծաղկեցրել են» հենց Պահլավունի իշխանի կենսագրության փվյալներով»[1]: Առաջադրված վարկածը մեզ այլ ճանապարհով է տանում: ***Այս տեքստում ոչ մի սխալ կամ թյուրիմացություն Գրիգոր Մագիստրոսի ու Ապիրատի անուններ-ի միջև չի կարող լինել:*** Մանավանդ **Ապիրատ** անունը գործածված չէ ընդհանրապես: Արդ, որտեղի՞ց է այն հայտնվում և վերափոխվելով դառնում Գրիգոր-Ապիրատ: Տեքստը մեզ այդպիսի եզրահանգման հնարավորություն չի տալիս: Սույնով պարզվում է, որ Կեչառիսից Երևան, մինչև Դվին ընկած տարածքը պատկանել է Ապիրատյան (Հասանյան) Ապիրատին, որի համար, սակայն, ոչ մի հիշատակություն աղբյուրներում չկա: Այն, որ Ապիրատյաններն (Հասանյաններն) ավելի ազդեցիկ են եղել, քան Վասակ քաջի ընտանիքը, բնավ ապացուցված համարել չենք կարող: Այդ հիմամբ՝ չէ՞ որ Ապիրատը 12-հազար, իսկ Գրիգոր Մագիստրոսի հայրը ընդամենը 5-հազար զինվոր են ունեցել[2]: Դրանից, ուրեմն, կարելի է ենթադրել, որ շինությունները հենց սրանց՝ Հասանյաններին էլ պատկանել են: Սա էլ իր հերթին նշանակում է, որ սրբավայրը Գրիգոր Մագիստրոսի հետ կապ չունի: Փորձենք որոշ պարզաբանում մտցնել այստեղ: Ղ. Ալիշանն այս մասին գրում է. «**Բջնո սահմանը երկայն է իբրև յարևելից ծովուն Գեղամայ յԱխուրեան գետ և ի հիւսիսոյ ի սահմանաց Գուգարաց մինչև....ընդ այս կողմս յԱյրարատ նահանգ**»[3]: Կ. Կոստանյանցն էլ նշում է, որ կալվածքի հարավային մասը հասնում է մինչև Գառնո մոտերը, մինչև Ազատ գետի հովիտը[4]: Այսպես ահա: Իսկ Գևորգ իշխանի տոհմական թեկուզև Պահլավունիական պատկանելիություն ունենալը չպետք է այնպես մատուցել, որ Ապիրատը հայտնվի իրադարձությունների կենտրոնում: 2000-ական թվականներին ավանդույթ է դառել այն, որ որոշ գիտնականներ որտեղ **Գրիգոր Մագիստրոս** անվանն են հանդիպում, այն ուղղակի մեխանիկորեն վերափոխում են **Ապիրատի**: Մինչդեռ բերված փաստերը մեզ այլ եզրահանգման են բերում: Արդեն ասվեց, որ Գրիգոր Մագիստրոսն ամենայն հավանականությամբ ավելի վաղ է ***Մագիստր/ռ/ոս*** մականունն ունեցել: Թերևս 25-30

---

[1] **Կ. Մաթևոսյան**, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 111:

[2] Նույն տեղում, էջ 108-109:

[3] **Ղ. Ալիշան**, Այրարատ բնաշխար Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 272:

[4] Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ ԻԷ:

տարեկանից է նա իր համար ընտրել իր մականունը, որն օգտագործել է երկար ժամանակ: Այո՛, չենք բացառում, որ հայոց մեջ ևս օգտագործվել են **մագիստրոսական** զինաստիճանը և **Հայոց մագիստրոս** պաշտոնները, ինչպես նշում է վիմագրագետ Գ. Սարգսյանը[1]: Իսկ սպարապետական տան ներկայացուցիչները կարող էին զինվորական միջին և բարձր աստիճաններ, ինչպես և պաշտոններ ու պատվանուններ ունենալ մինչ կառուցումները: Սրբավայրի մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում Սիմեոն Երևանցին՝ իր «Ջամբռ» կոչված աշխատության մեջ, ըստ որի՝ Մագիստրոսի որդի Վեստ Վահրամը՝ հետագայում Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը, նախապես եղել է Հավուց Թառի վիճակի կրոնական առաջնորդը, և նրա օրոք նրա տրամադրության տակ են եղել Երևանը և շրջակա յոթ գյուղերը: Նույն պատմիչը նշում է, որ կալվածքը որդուն է նվիրել հայրը[2]: Կ. Կոստանյանցն արդեն հիշված շինությունների պատվիրատու է համարում՝ Գրիգոր Մագիստրոսին[3]: Ինչ-որ անհայտ աղբյուրի հիման վրա Սիմեոն կաթողիկոսը 995 թ. Կեչառիսի չպահպանված մատուռի սկզբնավորող է համարում Ապիրատին՝ առանց աղբյուրը նշելու[4]: Չի բացառվում, որ Հասանի որդի Ապիրատ անվանվածը գուցե և Կեչառիսում սկսած լինի ինչ-որ կառուցումներ, ինչին մենք չենք հավատում և մեծ վերապահումով ենք վերաբերվում, որոնք ավարտել և շքեղ շինություններով զարդարել է Գրիգոր Մագիստրոսը՝ Վասակի որդին:

Հարց է նաև, թե ինչու անիաբնակ Ապիրատը՝ Հասանի որդին, պիտի կառուցումներ աներ Կեչառիսում 995 և 1003 թթ., հետո չբավարարվելով դրանով՝ 1013 թ. մի այլ եկեղեցի կառուցեր Հավուց Թառում (Ազատ գետի ափին), բայց **Գրիգոր Մագիստրոս** անունով: Կալվածքի տեր Վասակը և նրա որդի Գրիգորը, անկախ Ապիրատից, սկզբից ևեթ աչքի էին ընկնում շինարարական, ինչպես և եկեղեցաշինական լայն գործունեությամբ[5]: Իսկ Մխիթար Այրիվանեցու պնդման մասին, թե Ա-

---

[1] Տե՛ս **Գ. Սարգսյան**, Գրիգոր-Ապիրատ Հասանյան՝ հիմնադիր Կեչառիսի վանքի/ վիմագրական նոր վկայություն/, էջ 111-112:

[2] **Սիմեոն Կաթողիկոս**, Ջամբռ, Եր., Մուղնի հր., 2003, էջ 386-387:

[3] Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ ԼԱ-ԼԴ:

[4] **Սիմեոն Կաթողիկոս**, Ջամբռ, էջ 395:

[5] Նույն տեղում:

պիրատը «***շինեաց զԿեչառուս եւ եհան զառուն Երեւանայ»***[1]**,** ասում ենք, որ՝

1) կեչառիսյան խնդիրներում նրա պնդումները չեն հաստատվում:

2) Երևանի առուն փորելը, կարծում ենք, իրողություն է: Միայն թե այդ փորված առուն չպիտի ներկայացվի իբրև դարակազմիկ իրողություն:

Որքան էլ կարևորենք ջրանցք փորելու հանգամանքը, միևնույն է, չի փոխվի իրերի ընթացքը: Ապիրատը չի դառնա Գրիգոր Մագիստրոս, չի կարող համարվել Պահլավունի, թեկուզ նրա որդիները Պահլավունի են դառնում իրենց կանանց շնորհիվ՝ **պատվաստված Պահլավունիներ** (Աղ. երկրորդ)**:**

Գրիգոր Մագիստրոս մատենագրի շինարարական-մշակութային և գրավոր-մատենագրական ժառանգությունը, գիտամանկավարժական վաստակը, քաղաքական ու ռազմական գործչի բարի համբավը չի կարելի մասնատել: Գտնում ենք, որ ցանկացած խառնաշփոթ այստեղ ուղղակի փակուղային է: Եթե Ապիրատին պաշտպանողները Կեչառիսից մինչև Հավուց Թառ տարածքը Երևանով հանդերձ վերագրում են Ապիրատին, ապա ստացվում է, որ 11-րդ դ. սկզբում նրան է պատկանել և Բջնին՝ կալվածքի վարչական կենտրոնը: Իսկ ո՞րն է այդ դեպքում Վասակին պատկանող տարածքը: 1021 թ., երբ նա պայքարի դուրս եկավ սելջուկների դեմ իր 500 ռազմիկներով և զոհվեց, մարտադաշտ մեկնեց Բջնու իր ամրոցից իրեն հյուր եկած յոթ ազատների հետ միասին[2]: Իսկ այդժամ որտե՞ղ էր Ապիրատը իր 12-հազար զինվորներով: Արդյոք արաբ ոստիկանի՞ մոտ, որ կալվածքը փրկի ասպատակիչներից: Այլապես ինչո՞ւ պատմիչները Ապիրատի ջրագիծ փորելու վերաբերյալ գրում են, իսկ սխրանքների մասին նշել մոռանում՝ չկիսելով նորօրյա գիտնականների հիացմունքը: Ապիրատյան (Հասանյան) Ապիրատին Գրիգոր Մագիստրոս դարձնելիս մի մեծ վիհ է գոյանում, որ հիշեցնում է միայն մի մուտք ունեցող լաբիրինթոս: Բայց այնտեղ մտնողները երբեք այդ նույն տեղը վերադառնալ չեն կարող, քանզի բոլոր թելերը տանում են դեպ անհայ-

---

[1] **Մ. Այրվանեցի,** Պատմութիւն Հայոց, էջ 58: Նաև՝ Տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Հավուց Թառի եւ Ապիրատյան տոհմի պատմության նորահայտ տվյալներ, Բանբեր Մատենադարանի, հ. 17, Ե., 2006, էջ 161:

[2] Տե՛ս **Մ. Ուռհայեցի**, Ժամանակագրություն, էջ 16-21, /ծան. 34/:

տություն:

Ու եթե այժմ արձանագրությունները գնալով ավելանում են, ապա պետք է հիշել, որ Հովհանավանքում գտնված արձանագրությունն էապես փոխում է պատկերացումը կեչառիսյան **Հասանի** մասին և հնարավորություն ստեղծում գալիք ուսումնասիրողների համար բոլորովին այլ տեսանկյունից ընկալել ու վերծանել իրերի միջև առկա պատմության մութ էջերը: Եվ ի՞նչ: **Գրիգոր Մագիստրոս և Ապիրատ անունները նույնացման տեղիներ չունեն: Մինչդեռ նրանց հայրերի անուններն են, որ նկատելի աղերսներ ունեն[1]: Հասանի** անունը կապվում է **Վասակ** անվան հետ՝ դառնալով երկանուն: Մենք հիմնվում ենք ***Հովհաննավանքում հայտնաբերված արձանագրության վրա, որ նվիրված է խորհրդավոր Հասանի և 1021 թ. Նիգ գավառում նահատակվածների հիշատակին[2]:*** Մ. Ուռհայեցու ***նշած Հասանը Ապիրատի հայրն է[3]: Բայց Կեչառիսի 1-ին և 3-րդ արձանագրությունների Հասանը կարող է նույնանալ միայն «հեծելազորի հրամանատար, զորավար Վասակ Հոլում Պահլավունի Բջնեցի իշխանաց իշխանի»[4] հետ: Ակնհայտ է, որ Հովհանավանքի արձանագրությունն աներկբայորեն դա է հաստատում[5]:***

---

[1] Տե՛ս՝ **Ս. Մխիթարյան**, Մատենագրական տեղեկությունները Գրիգոր Մագիստրոսի մասին, **Տարեգիրք** (գիտական հոդվածների ժողովածու), հ. 12, Ե., ԵՊՀ հր., 2017, էջ 356-362:

[2] Տե՛ս **Աշոտ Մանուչարյան**, Նոր վիմագրեր Հովհանավանքից, Գիտական աշխատություններ, հ. 16, էջ 90: Արձանագրությունը փորագրված է մի փոքրիկ խաչքարի վրա, որ գտնվում է վիմագետ Աշոտ Մանուչարյանի հավաքածուում: Մենք անչափ շնորհակալ ենք նրան մեզ նյութեր տրամադրելու համար: Նա ներկայացնում է Պահլավունիներին, որոնցից մասնավորաբար Գրիգոր Մագիստրոսին՝ իբրև թագադիր ասպետի Անիական Հայաստանում: Տե՛ս Նույն տեղում, էջ 83-84: Նաև հեղինակի «Նորահայտ հիշատակություն «Հայոց ասպետ» վիմագրությամբ», ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Տեղեկագիրք, հ. Բ, Ե., 2007, էջ 157-161: Ուրախալի է նաև, որ Կ. Մաթևոսյանն էլ իր նոր ուսումնասիրության մեջ խոսում է Վասակ Քաջի նահատակության ու սրբացման մասին, ինչն ուղեկցվել է նաև վիմագրական դեռևս անհայտ այլ աղբյուրներ նոր հիշատակումներով և ինչը կլրացնի բացը: Տե՛ս՝ Կ. Մաթևոսյան, Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, էջ 37-69:

[3] Մ. Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 16-21:

[4] Տե՛ս **Աշոտ Մանուչա**ր յան, Նոր վիմագրեր Հովհանավանքից, Գիտական աշխատություններ, հ. 16, էջ 90:

[5] Նույն տեղում:

Նիգ գավառում զոհված Հասանը ոչ այլ որ է, քան Վասակ քաջը՝ Գրիգոր Մագիստրոսի հայրը: Սա է թերևս այն հարցի պատասխանը, թե ով է Հասանը, որի հիշատակը հարգում է Ապիրատի հետ «շփոթված» իսկական և ոչ կարծեցյալ Գրիգոր Մագիստրոսը:

(ՆՁԲ) 1033 թվականի հիշատակումը Կեչառիսի 1-ին և Հովհանավանքի արձանագրությունների մեջ հաստատում են դրանց երկուսի արժանահավատությունը, և դրանով այն դարձնում անվիճարկելի: Հասան անվան մասին խոսքն ակնհայտորեն վերաբերում է Վասակ սպարապետին: Նախկինում միանգամայն իրավացիորեն Ե. Լալայանը, Լ. Մելիքսեթ-Բեկը[1] և ուրիշներ չեն կասկածել արձանագրությունների թվականների վավերականությանը և Հասան անունը նույնացրել են Վասակ անվան հետ՝ դիտելով դրանք երկանուններ[2]: Ասվածը վերջապես հաստատվում է և արձանագրական լրացուցիչ տեքստերով՝ կեչառիսյան 2-րդ (1051 թ.) և 3-րդ (1053 թ.) արձանագրություններով:

Նկ. 3. Հովհանավանքի խաչքարը՝ նվիրված Նիգ գավառում զոհվածների և Հասան-Վասակի հիշատակին (լուսանկարը մեզ է տրամադրել վիմագետ Ա. Մանուչարյանը. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրութիան ինստիտուտ, 2017 թ.)

---

[1] **Լ. Մելիքսեթ-Բեկ,** ‹‹Վարդապետք Հայոց Հյուսիսային կողմանց›› և նրանց ինքնությունը, էջ 108:

[2] Տե՛ս **Ե. Լալայան,** Ազգագրական հանդես, թ. 22, էջ 102:

Տարբեր վայրերում Նիգ գավառում զոհվածների, մասնավորապես **Վասակ-Հասանի,** անունը սրբացվում է, արժանանում հիշատակի օրվա: Բայց ոչ մի պատմիչ որևէ տեղ չի հիշում Ապիրատի հայր Հասանի մահվան թվականի, թաղման վայրի կամ այլ մանրամասների մասին: Մինչդեռ այդ թվականին երկու հուշարձանների երեք վկայությունները՝ Կեչառիսի 1-ին ու 3-րդ և Հովհաննավանքի նորահայտ արձանագրությունները, գրում են այդ մասին, քանզի Խաչելության 1000-ամյակի առիթով արդեն Հայոց Եկեղեցին Գրիգոր Մագիստրոսի հայր Հասանի անունը սրբացրել է:

Կեչառիսին վերաբերող խնդիրներում պետք է նկատի ունենալ, որ՝ ***ձախողված են այն վերծանությունները, որոնցում փորձ է արվել «Գրիգոր Մագիստրոս›› անունը ներկայացնել իբրև «Գրիգոր-Ապիրատ Մագիստրոս››: Իրականում Հասան-Վասակ երկանվան մեջ է թաքնված գաղտնիքը, և հետագա ուսումնասիրություններն այդ ուղղությամբ պետք է տանել: Վասակ իշխանաց իշխանի անունը նաև Հասան է:***

* * *

Հանձին Գրիգոր Մագիստրոսի՝ մենք գործ ունենք 11-րդ հարյուրամյակի դարակազմիկ հեղինակներից մեկի հետ, որը նաև առաջին աշխարհական արվեստագետն է մեր իրականության մեջ: Նա է այն հանճարը, որ Գրիգոր Նարեկացու և Հովհաննես Իմաստասեր Սարկավագի հետ միասին սկզբնավորում է միջնադարի այն մեծ շարժումը, որը Հայկական Վերածնություն են անվանում: Նշանավոր բանաստեղծ-գիտնականը, իբրև պետական ու քաղաքական դեմք, ճանաչված է եղել բյուզանդական կայսրերի ու մետրոպոլիտների շրջանում, ունեցել է հույն, արաբ, ասորի, պարսիկ նշանավոր իմաստասեր բարեկամներ, համախոհներ ու ծանոթներ: Նա մեծ համբավ ու հեղինակություն է ունեցել հայոց Բագրատունյաց արքունիքում՝ մտերիմ է եղել Հովհաննես, իսկ հետո նաև Գագիկ 2-րդ արքաների հետ, որոնցից վերջինին թագադրել է անձամբ՝ փրկելու Անին կտակի պատճառով սկսված բյուզանդական նվաճումից: Ջերմ հարաբերություններ է ունեցել սիրելի հորեղբայր Վահրամ սպարապետի և դարի առաջավոր մի շարք դեմքերի հետ, որոնց զգալի մասն իր նամակագիրներն են: 1037-38 թթ. արքայական հրամանով ձերբակալելով Պետրոս հայրապետին՝ այնուհետև երեկվա հակառակորդները խորագիտորեն նամակագրական կապեր են հաստատում ի-

րար հետ: Նրա նամակագիրներն են բազմաթիվ նշանավոր աշխարհիկ անձինք նաև: Նա բազմաժանր ստեղծագործող է՝ քերական, փիլիսոփա, բժշկագետ, թարգմանիչ, բանաստեղծ-շարականագիր, թղթերի ժողովածուի հեղինակ և ընդհանրապես հանրագիտակ գիտնական, որ շարունակում է Մ. Խորենացու, Դ. Անհաղթի և Ա. Շիրակացու ավանդները: Նրա «**Հազարտողյան**» (Առ Մանուչե) պոեմը եզակի է նրանով, որ Աստվածաշնչի առաջին բանաստեղծական ամբողջական մշակումներից մեկն է, թերևս բացառիկ իր տեսակի մեջ (այդ պատճառով միջնադարյան մեծերն ու հասարակ գրիչները նրան ոչ պատահականորեն վարդապետ են անվանում): Չի կարելի չխոսել նրա մանկավարժական շատ լայն գործունեության մասին ինչպես Հաղպատ-Սանահինում, այնպես էլ Անիում, Բջնիում, Կեչառիսում, Տարոնի Ս. Կարապետի վանքում[1]: Իր սեփական ճեմարանը նա հիմնել էր Բջնիում, իսկ 1047 թ. հաստատել Ս. Կարապետում: Այս դեպքում առանձնակի ուշադրության է արժանի Կեչառիսի վանական բարձր դպրոցի կամ ճեմարանի հարցը, որը նույնպես հիմնել է Գր. Մագիստրոսը[2]: Այն որոշակի դադարներով գոյություն է ունեցել դեռևս այդ դպրոցի մյուս մեծ գործչի՝ Խաչ. վարդապետ Կեչառեցու օրոք (մահ. 1330 թ.): Կեչառիսի դպրոցը սկզբում շնորհիվ Գրիգոր մեծ իշխանի, իսկ հետագայում՝ Խաչատուր վարդապետի՝ մեծ հետք է թողել միջնադարյան հայ մշակույթի ու գրականության մեջ[3]: Սա ինքնին առանձին ուսումնասիրության նյութ է:

Այդ ամբողջ ընթացքում նա աչքի է ընկել ուսումնական ծրագրերի նորացմամբ (քառյակ և եռյակ արվեստներ, որոնց նա ավելացրել է Ս. Գրքի, առասպելավարժության, Պլատոնի և Արիստոտելի աշխատությունների գիտական ուսումնասիրությունը): Զբաղվել է դասագրքերի ստեղծմամբ, որոնցից է իր **Քերականի մեկնություն**-ը: Հորինել է ուսու-

---

[1] Տե՛ս **Ջուհարյան Թ.**, Հայ գրականության մեթոդիկա, Ե., 1980, էջ 20-22: **Սիմոնյան Ց.,** Ակնարկներ հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության, ԵՊՀ հր., 1971, էջ 39-41:

[2] Տե՛ս **Հարությունյան Հ.,** Հայաստանը 9-11-րդ դարերում, Ե., 1959, էջ 317:

[3] **Խաչ. Կեչառեցի**, Տաղեր, Ե., Սովետ. գրող, 1988, էջ 5 (տե՛ս Ա. Դոլուխանյան, Առաջաբանը), նաև՝ Ս. Մխիթարյան, Գր. Մագիստրոսը և Կեչառիսի ճեմարանական դպրոցը (Խ. Աբովյանի անվ. Պետ. Մանկ. Համ. 95-ամյակի), զեկ. 12. 12. 2017 (աշխ. ծր.): (Գիտ. զեկ և հոդ. ժողովածու), էջ 92-95:

ցողական բնույթի գործեր, հայրենասիրական ստեղծագործություններ, հանելուկատիպ տաղեր և այլն: Թոնդրակյան աղանդի մասին մեր գիտելիքները շատ աղքատիկ կլինեին, եթե նա իր թղթերում ազատամտորեն չներկայացներ նրանց աշխարհայացքային ըմբռնումները, գաղափարական առնչությունները մանիքեական, զրադաշտական, հունական ատոմիստական ուսմունքների և այլ կրոնափիլիսոփայական ուղղությունների հետ, չնշեր աղանդապետերի անուններ, գործելակերպի առանձնահատկություններ, չպարզաբաներ նրանց բարոյագիտական պատկերացումները: Այդպիսի միջնադարյան գործչի՝ հայկական շրջանակներից վաղուց դուրս եկած և արևելքում ու արևմուտքում հնում և այժմ մեծ ճանաչում գտած մեկի հանդեպ հայերս մեծ պարտականություններ ունենք:

ԱՂՅՈՒՍԱԿ 1-ԻՆ

ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ

(Իրական Պահլավունիներ)



ԱՂՅՈՒՍԱԿ 2-ՐԴ
ՀԱՍԱՆՅԱՆՆԵՐԻ (ԱՊԻՐԱՏՅԱՆՆԵՐԻ) ՏՈՀՄԱԾԱՌԸ



ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԸ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐԸ

Սարգիս Մխիթարյան

Բանալի բառեր՝ *Ներսես, Ապիրատ, Շնորհալի, Մագիստրոս, Հասան, Գևորգ, Կիլիկիա*

Կիլիկյան Պահլավունիները հիմնականում սերում են Գր. Մագիստրոսի երկու դուստրերից, որոնք ամուսնացան անեցի իշխան Ապիրատ Ապիրատյանի որդիներ Ապլջահապի և Վասակի հետ: Պատմագիտական և պատմագեղարվեստական սկզբնաղբյուրները, լրացնելով վիմագրերի շարքը, հաստատում են, որ կեչառիսյան աղբյուրների վերծանման անճշտությունները որոշ գիտնականներ այսօր սկսում են տարածել 12-րդ դ. կիլիկյան սկզբաղբյուրների վրա: Անեցի Ապիրատ Ապիրատյանին 1021 թ. սպանել է արաբ Աբուլսֆար ոստիկանը, և նրա անունը չի նույնանում Ն. Շնորհալու «Վիպասանություն» պոեմի Ապիրատի անվան հետ, որը Ծովք ամրոցի տերն է, իր հայրը: Իսկ արձանագրությունների և պատմական աղբյուրների վերծանումներում Գր. Մագիստրոսը չի նույնանում անեցի Ապիրատի հետ, քանզի վերջինս ո՛չ մագիստրոսի աստիճան ունի և ո՛չ «Մագիսրոս» մականունն է կրել: Նա Գրիգոր Մագիստրոս Պահլավունու հետ

նախապես ազգակցություն չի ունեցել, այդպիսի կապի մասին աղբյուրներում բնավ չի խոսվում: Նրանց թոռներն են, որ իրենց մայրական ժառանգության գծով դառնում են Պահլավունի, և հայագետ Ն. Ակինյանը նրանց անվանում է **պատվաստված Պահլավունիներ**: Հարգելով ավանդույթը՝ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի մահվանից (1105 թ.) հետո միայն Ապիրատյաններն իրենց Պահլավունի անվանեցին: Կնճիռը լուծվում է վերջերս Հովհանավանքում հայտնաբերված մի արձանագրությամբ: Նրանում հիշվում է **Հասան** անունը, որը փաստորեն Գրիգոր Մագիստրոսի հայրն է՝ Վասակ-Հասան երկանունով, ում հայ Եկեղեցին 1033 թ. սրբացրել է Արայի լեռան ստորոտում 1021 թ. հանուն հավատի զոհվելու համար ու Կեչառիսում սահմանել պատարագի օր: Դա անեցի Ապիրատի հայրը լինել չէր կարող: Ն. Շնորհալու և Մ. Ուռհայեցու հաղորդած փաստերն էլ կապվում են Վասակ սպարապետի և նրա որդի Գր. Մագիստրոսի անունների հետ: Այժմ հարկ է, որ մենք արհեստականորեն նոր շփոթ չառաջացնենք հիշյալ անձերի միջև ու միջնադարյան մեծ մատենագիր Գր. Մագիստրոս Պահլավունու շուրջ նոր պատմություններ չհորինենք:

ГРИГОР МАГИСТРОС И КИЛИКИЙСКИЕ ПАХЛАВУНИ

Саркис Мхитарян

Ключевые слова: *Нерсес, Апират, Шнорали, Магистр, Асан, Геворг, Киликия*

Киликийские Пахлавуни в основном происходят от двух дочерей Гр. Магистроса, которые вышли замуж за сыновей принца Ани, Апирата Апиратяна, Аплджахара и Васака.

Историографические основы, дополняя серию литографических фактов, подтверждают, что неточности в дешифровании Кечарийских источников некоторые учённые начинают распространять на Киликийских источников 12-ого века. Апират Апиратян из Ани был убит арабским правительем Абулсульфаром в 1021г., и его имя не идентичен имени Апирата из поэмы Н. Шнорхали " Випасанутюн" , который был владельцем замка Цовк, его отцом. Во время дешифровании протоколов и исторических источников становятся ясно, что Григор Магистрос не идентичен Апирата из Ани, так как последний не имел ни титула магистра, ни прозвище Магистрос. Изначально Апират не принадлежал династии Пахлавуни. Общие внуки этих двух личностей по материнской линии становились Пахлавуни. Поэтому известный арменолоджист Н. Акинян называет их "вакцинирован-ными" Пахлавуни. Следуя традициям, лишь только после смерти Григора Вкаясера Католикоса (в 1105г.) Апиратяни взяли фамилию Пахлавуни. Ответы на все вопросы даёт протокол недавно найденый в Ованаванке. В нем упомянуто имя Хасана, который является отцом

Гр. Магистроса, известным двумя именами - Хасан и Васак, которого Армянская Церковь осветила в 1033 г., за гибель ради веры на подгорье горы Ара в 1021 г. и в добавок к этому назначила литургический день в Кечарисе. Очевидно, что это не мог быть отец Апирата из Ани. А сведения, которые дошли до нас благодаря Н. Шнорхали и М. Урхаеци, связанны с именами Васака констаблья и его сына, Григора Магистроса. Крайне важно очередной раз не создавать искусственную путаницу вокруг этих двух личностей и не выдумывать новые истории об одного из величайших библиографов Средневековья, Григора Магистроса Пахлавуни.

GRIGOR MAGISTROS AND THE CILICIAN PAHLAVUNIS

Sargis Mkhitarian

Keywords: *Nerses, Apirat, Shnorhali, Magistros, Hassan, Gevorg, Cilicia*

The Cilician Pahlavunis mostly come from Grigor Magistros' two daughters, who have married the sons of the Prince of Ani, Apirat Apiratian, Apleghalap and Vasak. The historiographical basics, which complete the series of the lithographical ones, confirm, that the inaccuracies in the deciphering of Kecharissian sources some scientists used to spread on the Cilician ones belonging to the 12th century. Apirat Apiratian from Ani was killed in 1021 by Arab Policeman Abulsulfar, and he isn't identical to Apirat from N. Shnorhali's poem "Vipasanutyun", who was the Prince of fortress “Tsovk" and his father. It becomes obvious after the deciphering of the protocols and historical sources that Grigor Magistros, in his turn, isn't identical to Apirat from Ani, as the latter has had neither a master' s title, nor nickname "Magistros". Apirat has never been Grigor Magistros Pahlavuni's direct relative, and there is no information about it in the historical sources as well. It were their grandchildren, who had become Pahlavuni through their mothers' line. That's why Armenologist N. Akinyan used to call them "Vaccined" Pahlavunis. Following the tradition, only after Grigor Vkayaser Catolikos' death in 1105 Apiratians' became Pahlavunis.The answer to all the questions was given by the protocol recently found in Hovhanavank. It gives information about some Hassan, who is Grigor Magistros' father often known by two names - Vasak and Hassan, whom the Armenian Church sanctified in 1033 for dying for the faith at the bottom of Ara mountain in 1021, and set a liturgy day in Kecharis. Surely, he couldn't be the father of Apirat from Ani. The facts, represented by N. Shnorhali and M. Urhayetsi, are connected with the names of Vasak Constable and his son Grigor Magistros Pahlavuni. It is very important not to mess two quite different persons from now on and not to write new fake stories about one of the greatest medieval bibliographs, Grigor Magistros Pahlavuni.